Արձանագրություն N4
<<ՋԿ-ԳՀԾՁԲ-19/4-Տ>> ծածկագրով գնանշման հարցման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28 օգոստոսի 2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Հովհաննիսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Ալոյանը, Է. Մխիթարյանը, Մ. Կարապետյանը և Ս. Մովսիսյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. <<ՋԿ-ԳՀԾՁԲ-19/4-Տ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ

Օրակարգ՝
1. ՋԿ-ԳՀԾՁԲ-19/4-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով (Հավելվածներ 3 և 3.2) նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների քննարկում:
2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ առաջին տեղ զբաղեցրած <<Բագարանի Բարիք>> ՓԲ և <<Ալտերնատիվ>> ՍՊ ընկերությունների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ եզրակացության ուսումնասիրության արդյունքների քննարկում:

Ելույթ ունեցավ գնահատման հանձնաժողովի նախագահ Հ. Հովհաննիսյանը և նշեց, որ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրվել են հրավերով պահանջվող որակավորման չափանիշների վերաբերյալ 1-ին տեղ զբաղեցրած ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը:

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ <<Բագարանի Բարիք>> ՓԲ և <<Ալտերնատիվ>> ՍՊ ընկերությունների վերաբերյալ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հարցումը ներկայացվել է 21.08.2019 և 22.08.2019 թվականին:

26.08.2019 և 27.08.2019 թվականին ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը:

Որով <<Բագարանի Բարիք>> ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն:

Սահմանված կարգով ընկերությունը ծանուցվել է և ընկերության կողմից կատարվել է հարկային պարտավորությունների մարում:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանձնաժողովը որոշեց՝
1. ՋԿ-ԳՀԾՁԲ-19/4-Տ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել.
   - 1-ին, 2-րդ չափաբաժիններում՝ <<Բագարանի Բարիք>> ՓԲԸ-ին,
   - 3-րդ չափաբաժնում՝ <<Ալտերնատիվ>> ՍՊԸ-ին:
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,

3. 1-ին, 2-րդ չափաբաժինների մասով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, իսկ 3-րդ չափաբաժնի մասով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել նշված չափաբաժիններում ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝
Նախագահ՝ _____ Հ. Հովհաննիսյան

Անդամներ _____ Գ. Ալոյան

_____ Է. Մխիթարյան

_____ Մ. Կարապետյան

_____ Ս. Մովսիսյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան